

**ՌՈՒՄԱՆԻՈՑ ԵԽ ՊՈՒԼԿԱՐԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴ
ԳԵՐԸ. Տ. ՏԻՐԱՅԹ ԵՊՍ. ՄԱՐՏԻԿԵԱՆ ՄԵՐ ՄԷՋ**

Երկուշաբթի, 12 Յունուար 1970, կ. գ. ժամը 5.30ին հիւրաբար Ս. Մթոռ ժամանեց Ռումանիոյ և Պուլկարիոյ Առաջնորդ Գերշ. Տ. Տիրայր Եպս. Մարտիկեան, որ Միարանութեան կողմէ ընդունուեցաւ Վանքի մուտքին եւ Հրաշափառքի առաջնորդութեցաւ Ս. Յակոբեանց Մայր Տաճար, ուր Ս. Գիւրադրի առջեւ կատարուած ուխտէն եղա, եկեղ. Դասէն ներկաներուն լաշինց Ն. Ա. Օ. Տ. Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետի ողջոյներն ու օրհնութիւնները: Ապա շարականի երգեցողութեամբ Գերազնորհ հիւրը եւ Միարանութիւն բաժգացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազն Հօր կողմէ պատչաճ ընկունելութիւն կատարուեցաւ:

Յաջորդող օրերուն, Գերշ. Սրբազնը պաշտօնապէս այցելեց սրբատէղիները՝ ինչպէս Ս. Յարութեան Տաճար եւ Յեթեհէմի Ս. Մննդեան Այրին ու Հայապատկան դարաւոր Վանքը:

Կիրակի, 18 Յունուար 1970ին, Սրբազն Հայրը մասնակցեցաւ Ս. Մընութի Պատրիարքական փառաւոր շքերթին եւ նախագահէց գիշերային արարողութիւններուն, որոնց աւարտին հանդիսաւոր Ս. Պատարագ մատոյց Փրկչի Մննդեան Սուրբ Այրին վրայ: Կէս գիշերի արարողութենէն մաս մը ձայնասփուեցաւ Խորայէլեան ուստիոկայանէն:

Անունակոչութեան տօնին, Երկուշաբթի, 26 Յունուար 1970, Գերաշնորհ Տ. Տիրայր Եպս. Հանդիսաւոր Պատարագ մատոյց Սուրբ Յարութեան Տաճարին մէջ, Քրիստոնոյ Ս. Գերեզմանին վրայ ու կոռու քարոզով մը վեր հանեց տօնին նշանակութիւնը: Պատարագն ու քարոզը ձայնասփուեցան:

Տարբեր առիթներով եւս, Սրբազն Հայրը քարոզեց Երուսաղէմի Հայ Հաւատացեաներուն եւ հոգեպէս միիթարեց զանոնք:

Տնական օրերու աւարտին, Գերշ. Սրբազն Հայրը իր մասնակցութիւնը բերաւ չնորհաւորական պաշտօնական այցելութիւններուն եւ ընդունելութիւններուն ընթացքին:

Առաջնորդ Սրբազնը Պատրիարքարանիս ժառանգաւորաց Վարժարանի եւ Ծննդայարանի, ինչպէս նաև Սրբազն Հայրը մասնակցութիւնը բերաւ չնորհաւորական պաշտօնական այցելութիւններուն եւ ընդունելութիւններուն ընթացքին:

Առաջնորդ Սրբազնը Պատրիարքարանիս ժառանգաւորաց Վարժարանի ասներուն դասախոսեց Ռումանիոյ եւ Պուլկարիոյ Հայ գաղութներու անցեալ եւ ներկայ կենաքին մասին եւ ժապանէնի ցուցադրութիւն կատարեց:

Երեքաբթի, 3 Փետրուարին, Տ. Տիրայր Սրբազն Հրաժեշտ առաւ եւ Ամմանի ճամբով մեկնեցաւ Պէյրութ:

